ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
22.04.2026 թվականին կնքված N ՀԿՓԲԸ-ԷԱՃԱՊՁԲ-26/05 գնման պայմանագրի

ք. Երևան «05» «մայիսի» 2026թ.

«Հատուկ Կապ» ՓԲԸ-ը, ի դեմս տնօրեն՝ Մ. Ղասաբօղլյանի, որը գործում է ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «Մուրան» ՍՊԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն՝ Տ. Քյուֆարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող) մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենդրությամբ, գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ, հիմք ընդունելով 22.04.2026թ. կնքված N ՀԿՓԲԸ-ԷԱՃԱՊՁԲ-26/05 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.15 կետերը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գնորդի մոտ չի վերացել գնման պահանջը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Կողմերը որոշեցին՝

1.1. Հատկացված ֆինանսական միջոցների շրջանակներում Պայմանագրով նախատեսված ապրանքների ձեռքբերումն իրականացնելու նպատակով, Պայմանագրի N 2 հավելվածը՝ վճարման ժամանակացույցը, հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի N 1 հավելվածի:

2. Այլ պայմաններ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի N 1 հավելվածը կցվում է սույն համաձայնագրին և հանդիսանում է համաձայնագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

Գնորդ	**Վաճառող**
«Հատուկ կապ» ՓԲԸ	«Մուրան» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Հակոբ Հակոբյան 3	ՀՀ, ք. Երևան, Աճառյան 42
Ինեկոբանկ» ՓԲԸ	«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2052822133751001	Հ/Հ 2481000888500023
ՀՎՀՀ 02509254	ՀՎՀՀ՝ 00084235
Տնօրեն՝ Մ. Ղասաբօղլյան	Գլխավոր Տնօրեն՝ Տ.Քյուֆարյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ. Տ

Հավելված N 1
«22» ապրիլի 2026թ. կնքված
N ՀԿՓԲԸ-ԷԱՃԱՊՁԲ-26/05 ծածկագրով պայմանագրի
«05» « մայիսի » 2026թ. կնքված
N1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀդրամ

ապրանքի															
չ/հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը տարի
1	34141440/ 501	Էլեկտրական մեքենաներ				34500000	34500000	34500000	34500000	34500000	34500000	34500000	34500000	34500000	**34500000**

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

Գնորդ
«Հատուկ կապ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Հակոբ Հակոբյան 3
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝205822133751001
ՀՎՀՀ՝ 02509254
Տնօրեն՝ Մ. Ղասաբօղլյան

/ստորագրություն/
Կ.Տ.

Վաճառող
«Մուրան» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Աճառյան 42
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2481000888500023
ՀՎՀՀ՝00084235
Գլխավոր Տնօրեն՝ Տ.Քյուֆարյան

/ստորագրություն/
Կ. Տ